

Իջևան համայնքի սոցիալական ոլորտի ծրագրերը

1. Իջևան համայնքի սոցիալական կարիքների գնահատում

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

<i>Բնակչության թիվ</i>	47 332
<i>Տնային տնտեսությունների թիվ</i>	9 447
<i>Երեխաների թիվ</i>	11 533
<i>Կանանց թիվը</i>	23 645
<i>Տղամարդկանց թիվը</i>	23 687
<i>Գրանցված ծնունդների քանակը</i>	285
<i>Ամուսնությունների թիվը</i>	83
<i>Ամուսնալուծությունների թիվը</i>	19
<i>Նպաստառու տնային տնտեսությունների թիվ</i>	3 550
<i>Կենսաթոշակառուներ</i>	8500
<i>Հաշմնդամություն ունեցող անձանց թիվը</i>	3500
<i>Համայնքային սոցիալական աշխատող</i>	Այո

Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների թիվ՝ 37

(Տարիք 18-65՝ 28, 65+ 9 մասնակից)

Սոցիալական հիմնախնդիրներ, կարիքներ

Ֆոկուս-խմբային և խորին հարցազրույցների ընթացքում վեր հանված կարիքներ

□ Տարեցներն ունեն ժամանցի և զբաղվածության կարիք

Ծրագրի հետազոտությունների և ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ Իջևան համայնքում տարեցները ունեն սոցիալական, առողջապահական, հոգեբանական ծառայությունների, խնամքի, զբաղվածության և ժամանցի կազմակերպման կարիք :

□ Հասանելի ծառայություններ միայնակ տարեցներին

Միայնակ տարեցները անպաշտպան և անօգնական են համայնքում: Նրանք կարիք ունեն խնամքի և ուշադրության:

□ 0-18տ հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական և վերականգնողական ծառայությունների հասանելիության խնդիր

0-18 տ հաշմանդամություն ունեցող անձանցից շատերի համար սոցիալական և հատուկ մասնագիտական ծառայությունները անհասանելի և ոչ մատչելի են: Կարիք կա կարողություններին համապատասխան մասնագիտական ուսուցման դասընթացների:

□ 18-ից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն զբաղվածության և ժամանցի կազմակերպման խնդիր:

Նրանք համարվում են աշխատաշուկայում անմրցունակ և չունեն զբաղվածության հնարավորություն կամ շատ փոքր են այդ հնարավորությունները:

□ Հաշմանդամ երեխաների ծնողները ունեն զբաղվածության խնդիր

Հաշմանդամ երեխաների ծնողները գրկված են աշխատանքի հնարավորությունից: Կարիք կա ծրագրերի, որոնք կօգնեն նման ծնողներին աշխատել տանից՝ միաժամանակ խնամք տանելով իրենց երեխաներին:

□ Սոցիալապես անապահով ընտանիքների խնդիրները մնում են չլուծված

Սոցիալապես անապահով ընտանիքները դժվարանում են ինքնուրույն հաղթահարել իրենց առջև ծառայած դժվարություններն ու խնդիրները: Ունեն կենցաղավարման,

ֆինանսական միջոցների գրազետ տնօրինման, աշխատաշուկայում մրցունակ լինելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների պակաս:

□ Անվտանգության խնդիր

Բնակիչները որպես համայնքի առաջնային կարիք համարում են սահմանապահ գյուղերի ուժեղացմանն ու ապահովությանն ուղղված ծրագրերը:

□ Ճանապարհների բարեկարգման խնդիր

Իջևան համայնքում, հատկապես՝ շենքերի բակերը գտնվում են անմխիթար վիճակում, կարիք ունեն ասֆալտապատման: Հատկապես անձրևների շրջանում բնակիչները մեծ դժվարությամբ են տեղաշարժվում: Շենքերի բակերում բացակայում են խաղահրապարակներ երեխաների համար: Երեխաները խաղում են փոշոտ և կեղտոտ ճանապարհներին՝ վտանգելով նաև իրենց կյանքը բակերով երթևեկող մեքենաների առկայության պատճառով:

□ Տրանսպորտային հաղորդակցման խնդիր

Իջևան խոշորացված համայնքի մի շարք բնակավայրերում կա ոչ բարեկարգ ճանապարհների և միջհամայնքային տրանսպորտային կապի բացակայության խնդիր:

□ Թափառող շների և առանց հովիվ անասունների առկայության խնդիրը համայնքում

Համայնքում մեծ խնդիր է թափառող շների ոհմակների առկայությունը, բնակիչները վախենում են ազատ քայլել քաղաքում, երեխաները վախով են հաճախում դպրոց և ուսումնական հաստատություններ: Բացակայում են թափառող շների հարցերով զբաղվող կառույցներն ու ծառայությունները: Անտառներում ազատ արձակված կովերն ու ձիերը հաճախ շրջում են քաղաքում անհարմարություն պատճառելով բնակիչներին, երթևեկությանը ինչպես նաև աղտոտում են քաղաքը:

□ Կոյուղու բացակայություն

Համայնքի մի շարք թաղամասեր չունեն կոյուղու համակարգ: Խնդիրը լուծում են իրենց բակերում փոսեր փորելու միջոցով, որը մեծ անհարմարություն է՝ հատկապես ամառվա շոգ ամիսներին:

□ Սպասարկման ոլորտում առկա խնդիրներ

Քաղաքում առկա ժամանցի վայրերում ցածր է սպասարկման որակն ու մակարդակը:

□ Քաղաքի մաքրության պահպանումը

Քաղաքի մաքրությունը պահպանված չէ, աղտոտված է Աղստև գետը:

1. Իջևան համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները

Իջևան համայնքի սոցիալական ոլորտի տեսլական է համայնքում հասարակության տարբեր խմբերի բարեկեցության լայն հնարավորությունների առկայություն՝ համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ակտիվ համագործակցության միջոցով:

Նշված տեսլականին հասնելու համար սահմանվել են հետևյալ նպատակները

- Ապահովել Իջևան խոշորացված համայնքի տարեցների ցերեկային խնամքն ու զբաղվածությունը, մատուցել սոցիալական, հոգեբանական, առողջապահական հասանելի ծառայություններ՝ ստատիկ և մոբիլ տարբերակներով:
- Ապահովել Իջևան խոշորացված համայնքի 0-18 տարեկան հաշմանդամություն ունեցող, այդ թվում հեռավոր սահմանապահ բնակավայրերի հաշմանդամություն ունեցող երեխաների համար հասանելի, մատչելի և մոբիլ ծառայություններ:
- Մատուցել սոցիալական, հոգեբանական, վերականգնողական, ժամանցային հասանելի և մատչելի ծառայություններ 18 և բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձանց:
- Նպաստել Իջևան խոշորացված համայնքում ինքնաբավ և համայնքային կյանքին ակտիվ ներառված ընտանիքների թվի մեծացմանը՝ կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով:

Հիմք ընդունելով համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը, նպատակները և արդյունքները՝ անհրաժեշտ գործողությունները սահմանվել են տրամաբանական հենքի մեթոդաբանությամբ, որոնք ներկայացված են Աղյուսակ 1.-ում:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման հասնելու խնդիրները, արդյունքները և գործողությունները (սոցիալական ոլորտ)

<i>h/h</i>	<i>Խնդիրները</i>	<i>Միջանկյալ արդյունքները</i>	<i>Անհրաժեշտ գործողությունները</i>	<i>Պահանջվող ռեսուրսները</i>

4	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության	Տարեցների համար առկա են սոցիալական, հոգեբանական, առողջապահական, խնամքի հասանելի ծառայություններ:	<ul style="list-style-type: none"> ✓ Աշխատանքային թիմի ձևավորում ✓ Իջևան խոշորացված համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների, տարածաշրջանում գործող կազմակերպությունների հետ համագործակցային կապերի ստեղծում ✓ Շահառուների քարտեզագրում, կարիքների գնահատում և դասակարգում: ✓ Մասնագիտական խմբի վերապատրաստում ✓ Թեժ գիծ ✓ Ծառայությունների մատուցում 	Կամավորներ, Համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք
	0-18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծառայությունների մատուցում ստացիոնար և մոբիլ եղանակով:	<ul style="list-style-type: none"> ✓ Ծառայությունների մատուցման մեթոդաբանության մշակում ✓ Մասնագիտական թիմի ձևավորում ✓ Շահառուների քարտեզագրում, կարիքների գնահատում և ուղղորդում: ✓ Իջևան խոշորացված համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների, պետական և համայնաքային ենթակայության կառույցների, տարածաշրջանում գործող կազմակերպությունների հետ համագործակցային կապերի ստեղծում ✓ Մասնագիտական խմբի վերապատրաստում ✓ Ծառայությունների մատուցում 		
	Հաշմանդամություն ունեցող երիտասարդների և զին. հաշմանդամների կարիքներին համապատասխան ապահովված են հասանելի, մատչելի ծառայություններ (կարողությունների զարգացում, զբաղվածություն, ինքնագրավածության հնարավորություն, ժամանց, սպորտ, մշակույթ)	<ul style="list-style-type: none"> ✓ Ծառայությունների մատուցման մեթոդաբանության մշակում ✓ Մասնագիտական թիմի ձևավորում ✓ Շահառուների քարտեզագրում, կարիքների գնահատում և ուղղորդում: ✓ Իջևան խոշորացված համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների, պետական և համայնաքային ենթակայության կառույցների, տարածաշրջանում գործող կազմակերպությունների հետ համագործակցային կապերի ստեղծում ✓ Մասնագիտական խմբի վերապատրաստում ✓ Ծառայությունների մատուցում 		

	Մոցիալապես անապահով ընտանիքների խնդիրները հաղթահարված են անդամների կարողությունների և հմտությունների զարգացմանը բազմաբնույթ ծառայությունների մատուցման միջոցով/սոցիալական, հոգեբանական, կրթական և այլն/:	<ul style="list-style-type: none"> ✓ Աշխատանքային թիմի ձևավորում ✓ Իջևան խոշորացված համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների, տարածաշրջանում գործող կազմակերպությունների հետ համագործակցային կապերի ստեղծում ✓ Շահառուների քարտեզագրում, կարիքների գնահատում և դասակարգում: ✓ Մասնագիտական խմբի ձևավորում՝ հոգեբան, 2 սոցիալական աշխատող ✓ Վերապատրաստումներ՝ կենցաղավարման, ընտանեկան բյուջեի կառավարման, ծնողավարման հմտությունների, մասնագիտական կարողություններ 	
--	--	--	--

Ծ Ր Ա Գ Ը Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ը Ո Ւ .
« Տարեցների խնամքի կենտրոն Իջևան բազմաբնակավայր համայնքում »
 (Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը											
Օրագրի անմիջական նպատակ	Ապահովել Իջևան խոշորացված համայնքի տարեցների ցերեկային խնամքն ու զբաղվածությունը, մատուցել սոցիալական, հոգեբանական, առողջապահական հասանելի ծառայություններ՝ ստատիկ և մոբիլ տարբերակներով											
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ									
							2021	2022	2023	2024	2025	2026
-	50	50	50	70	70							
Օրագրի միջանկյալ արդյունքներ	1. Կենտրոնի կողմից մատուցվում են որակյալ ծառայություններ											
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ									
							2021	2022	2023	2024	2025	2026
							-	6	6	6	7	7
	2. Կենտրոնի կողմից մատուցվում են որակյալ ծառայություններ											
	Շահառուների բավարարվածության մակարդակ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ									
							2021	2022	2023	2024	2025	2026
							-	75%	75%	75%	75%	75%
	3. Համայնքում գործում է համագործակցության ցանց											
	Համագործակցության ցանցում ընդգրկված	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ									
2021							2022	2021	2022	2021	2022	

	կազմակերպություններ	-	5	5	7	7	7
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչներ,</p> <p>1.2 Հավաքագրել որակյալ մասնագետներ</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Բարեկարգել և հարմարեցնել տարածքը ծառայությունների մատուցման համար</p> <p>2.2 Ձեռք բերել անհրաժեշտ գույք և տեխնիկա</p> <p>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>3.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները</p> <p>3.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառուների աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը</p>						
Ծրագրի բյուջեն	17 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Մշակութային, ընտանեկան կարծրատիպեր						
Ծրագրի հիմնական շահառուները	Տարեցներ, միայնակ տարեցներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021-2026						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Պետական վիճակագրության տվյալներով Հայաստանի համայնքները, մասնավորապես Իջևան խոշորացված համայնքի սահմանամերձ բնակավայրերը, ունեն ձերացող բնակչություն՝ երիտասարդների մեծ մասը դուրս են գալիս համայնքներից ներքին և արտաքին միգրացիայի պատճառով: Արդյունքում տարեցները մնում են միայնակ և առանց խնամքի: Տարեցների մտա հիմնականում ի հայտ են գալիս առողջական, սոցիալական, հոգեբանական խնդիրներ միայնակության, զբաղվածության և խնամքի բացակայությունից:</p> <p>Իջևան քաղաքում միայնակ տարեցների խնդիրներին մասնակի լուծում են տալիս միայն «Հայկական կարմիր խաչ» կազմակերպությունը՝ պարբերաբար տրամադրելով պարենի փաթեթ, համայնքապետարանը՝ դիմումի համաձայն, տրամադրում է փոքրիկ դրամական աջակցություն: Ծրագրի հետազոտությունների և ֆոկլուս խմբային քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ տարեցները ունեն սոցիալական, առողջապահական, հոգեբանական ծառայությունների, խնամքի, զբաղվածության և ժամանցի կազմակերպման կարիք :</p>						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ը Ն 2.

« 0-18 տ հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական և հատուկ մասնագիտական ծառայություններ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը
---	---

Օրագրի անմիջական նպատակ	Օրագրի նպատակն է նպաստել 0-18 տ. հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավմանը, սոցիալական ներառմանը, ինքնուրույն կյանքի և կարողությունների, հմտությունների զարգացմանը, նրանց ներառմանը հասարակության մեջ և համայնքային կյանքին:						
	Օտոայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	70	70	80	80	80
	1. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	3	3	4	4	5
	2. Համայնքի բնակիչները բավարարված են կետրոնում մատուցվող ծառայություններից						
	Շահառուների ծառայություններից բավարարվածության մակարդակ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2021		2022	2023	2024	2025	2026	
-		80 %	80 %	80 %	80 %	80 %	
3. Համայնքում գործում է համագործակցության ցանց							
Համագործակցության ցանցում ընդգրկված կազմակերպություններ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2021	2022	2023	2024	2025	2026	
	-	5	5	7	7	7	
Օրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Առկա սոցիալական ծառայությունների քարտեզագրում</p> <p>1.2 Մասնագետների վերապատրաստում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Պոտենցիալ շահառուների քարտեզագրում, հավաքագրում և դասակարգում</p> <p>2.2 Օտոայությունների կազմակերպման համար համապատասխան տարածքի և պայմանների ստեղծում</p> <p>2.3 Բնակիչների ներգրավում ծառայություններում</p> <p>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>3.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները</p> <p>3.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառուների աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը</p>						
Օրագրի բյուջեն	18.5 մլն դրամ						
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Օտոայության կազմակերպման համար տարածք, ծրագրով նախատեսված սոցիալական ծառայությունների մասնագետներ						
Օրագրի հիմնական	Տրանսպորտային հասանելիություն,						

ռիսկերը	
Օրագրի հիմնական շահառուները	0-18տ հաշմանդամություն ունեցող երեխաներ և նրանց ծնողներ
Օրագրի սկիզբ և ավարտ	2021-2026
Օրագրի համառոտ նկարագրություն	Իջևան խոշորացված համայնքը ունի 102 հաշմանդամություն ունեցող 0-18 տարեկան երեխա, որոնք պետք է իրացնեն իրենց կրթական, սոցիալական, առողջապահական, ընտանիքում ապրելու, համայնքային կյանք ունենալու իրավունքները: Հաշմանդամություն և զարգացման խանգարումներ ունեցող 0-18 տարեկան երեխաների համար սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծառայությունները Իջևան խոշորացված համայնքում մատուցվում են «Հույսի կամուրջ» ՀԿ երեխայի զարգացման և սոցիալական ներառման կենտրոնի և ԱՐԲԵՍ երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոնի կողմից: Նշված կենտրոններում գործում են զարգացման ծառայություններ, վերականգնողական ծառայություններ, առողջապահական, իրավական և սոցիալական խորհրդատվական ծառայություններ: Հույսի կամուրջի երեխայի զարգացման և սոցիալական ներառման կենտրոնը ծառայություններ է մատուցում 2-18 տարեկան շուրջ 80 հաշմանդամություն ունեցող երեխաների և 25 զարգացման խնդիրներ ունեցող երեխաների: Թեև այս ծառայությունները Իջևան քաղաքում կան և գործում են , սակայն հասանելի չեն հատկապես հեռավոր սահմանապահ համայնքների երեխաների համար, որպեսզի շարունակաբար, ամեն շաբաթ նրանք օգտվեն սոցիալ-հոգեբանամանկավարժական, վերականգնողական ծառայություններից: Հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների սոցիալական անապահովության, համայնքային տրանսպորտի անհասանելիության կամ անմատչելիության պատճառով հաշմանդամություն ունեցող երեխաների մի մասը չեն ստանում կամ ամբողջական ծավալով չեն օգտվում համայնքում գոյություն ունեցող ծառայություններից: Նշված խմբի ընտանիքներն ունեն աջակցության կարիք, որպեսզի առկա ծառայությունները դառնան հասանելի և մատչելի:

Ծ Ր Ա Գ Ը Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ը Ն Յ.
« 18 տ. բարձր հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ծառայություններ»
(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Օրագրի անմիջական նպատակ	Մատուցել սոցիալական, հոգեբանական, վերականգնողական, ժամանցային հասանելի և մատչելի ծառայություններ 18 և բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձանց						
	Օտարությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
	-	70	70	70	80	80	
Օրագրի միջանկյալ արդյունքներ	1. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	9	9	9	11	11
2. Կենտրոնի կողմից մատուցվում են որակյալ ծառայություններ							
Մատուցվող ծառայությունների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					

		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	7	7	7
3. Կենտրոնի կողմից մատուցվում եմ որակյալ ծառայություններ							
	Շահառուների բավարարվածության մակարդակ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2022	2023	2024	2025	2026
		-	70%	70%	70%	80%	80%
Օրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Մահմանել մասնագետների որակավորման չափորոշիչներ, 1.2 Հավաքագրել որակյալ մասնագետներ</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, 2.2 Կազմել ծառայությունների մատուցման ժամանակացույցը</p> <p>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>3.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները 3.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառուների աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը</p>						
Օրագրի բյուջեն	16.2 մլն դրամ						
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ						
Օրագրի հիմնական ռիսկերը	Համայնքում բնակավայրերի քանակը, տարածությունը, տրանսպորտային հասանելիությունը						
Օրագրի հիմնական շահառուները	18 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող անձիք						
Օրագրի սկիզբ և ավարտ	2021-2026						
Օրագրի համառոտ նկարագրություն	<p>Իջևան խոշորացված համայնքը ունի շուրջ 3500 հաշմանդամություն ունեցող բնակիչ, որոնցից շուրջ 300-ը 18-ից 30 տարեկան երիտասարդներ են (ըստ «Հուլիսի կամուրջ» ՀԿ ունեցած տվյալների): Նրանց մեծ մասը ունի հիմնական կամ միջնակարգ կրթություն, ավելի փոքր թվով երիտասարդներ ունեն միջին մասնագիտական կրթություն, իսկ առավել փոքր տոկոս կազմում են բարձրագույն կրթությամբ երիտասարդները:</p> <p>Տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունները պարզել են, որ 18-ից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձիք ունեն զբաղվածության և ժամանցի կազմակերպման խնդիր: Նրանք համարվում են աշխատաշուկայում անմրցունակ և չունեն զբաղվածության հնարավորություն կամ շատ փոքր են այդ հնարավորությունները:</p> <p>Անմատչելի ֆիզիկական միջավայրը, սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծառայությունների սակավ հնարավորությունները, զբաղվածության և ժամանցի կազմակերպման անհասանելիությունը առավել խորացնում են կարծրատիպը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ :</p>						

Ծ Ր Ա Գ Լ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ը N 4
« Ը ն տ ա ն հ ի ք ն եր ի ա ջ ա կ ց ու թ յ ա ն ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր »
 (Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը						
Օրագրի անմիջական նպատակ	Նպաստել Իջևան խոշորացված համայնքում ինքնաբավ և համայնքային կյանքին ակտիվ ներառված ընտանիքների թվի մեծացմանը՝ կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
Օրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքում գործում է ընտանիքի աջակցության կենտրոն						
	Ծառայությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	5	5	6	6	7
	2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	3	3	5	5	7
	3. Շահառուների ընտանիքներ ստանում են մասնագիտացված ծառայություններ						
	Շահառուների բավարարվածության աստիճան	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2021	2022	2023	2024	2025	2026
		-	75%	75%	75%	75%	75%
Օրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1 Ձեռք բերել համապատասխան տարածք, գույք, տեխնիկական միջոցներ</p> <p>1.2 Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները, հավաքագրել որակյալ մասնագետներ</p> <p>2.2 Ստեղծել մասնագետների և կամավորների բազա</p> <p>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>3.1 Սահմանել անհրաժեշտ ծառայությունների ցանկը, ստանդարտները և չափորոշիչները</p> <p>3.2 Կազմել ծառայությունների մատուցման ժամանակացույցը</p> <p>3.3 Ներգրավել շահառուներին ըստ սահմանված չափորոշիչների և ըստ գնահատված կարիքների ներառել ծառայությունների ծրագրերում</p>						
Օրագրի բյուջեն	12 մլն դրամ						
Օրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ, տրանսպորտ						

ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ, իրազեկման ցածր մակարդակ
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի խոցելի ընտանիքներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021-2026
Ծրագրի համառոտ նկարագրություն	Իջևան խոշորացված համայնքում կան մեծ թվով ընտանիքներ (մոտ 3500 ընտանիք), որոնց մեծ մասը ներառված են ընտանեկան նպաստ համակարգում: Սոց. հարցումների և կարիքների գնահատումը ցույց է տվել, որ այս ընտանիքները, չնայած նրան որ գտնվում են պետական և ոչ պետական կառույցների հոգածության ներքո, փաստացի չեն կարողանում ինքնուրույն հաղթահարել աղքատության շեմը, սոցիալական վիճակը այդպես էլ չի բարելավվում՝ կենցաղավարման, ընտանեկան բյուջեի կառավարման, ծնողավարման հմտությունների, մասնագիտական կարողությունների բացակայության պատճառով: